



կօզմի նրան ներթափանցեալ և բարոյապէս, որովհետեւ կը տեսնուի նրա մէջ իր կենսական պահանջին բաւականութիւն տուող մի հիմնարկութիւն: Այն ժամանակ նա կը սկսի սիրել և իր մայրենի լեզուն էլ, որի օգնութեամբ նա սովորեց մի քանի շաբաթներու մէջ հակուսեալ շուրջի զէպի իրեքականը, զէպի պատուանակները, որքան հայր: Հայր ամեն բան գնահատում է օգուտի, շահի գնով: Իր ազգը սիրելուց, իր մայրենի լեզու սովորելուց առաջ էլ հայր մտածում է, լաւ կըլու՞մ է արգեօք շահ կայ ազգը սիրելուց, արգեօք օգուտ կայ հայ լինելուց, արգեօք շահ կայ մայրենի լեզու սովորելուց, — և ըստ այնմ վարվում է...

Ինչ արած. պէտք է օգուտ քաղել այդ հակուսեաներից:

պար շրջելու նորա ի թեմին առ ի քաղաքէլ զայս գումար վիճակաւոր առաջնորդի թեմին Տեառն Գեորգայ արք-եպիսկոպոսի: Որպէս հաստատ գիտեմ այդ գումարը ուղարկված է Աստուած ի թեմի առաջնորդ Գեորգ եպիսկոպոս վեհապետեանցին, որի մօտ և այժմ գտնվում է այդ գումարը: Ի պարտական վարչութիւնքը թող զիմեն վիճակաւոր առաջնորդին, եթէ կամին յետ տառնալ իրանց զպարտեանի պատկանեալ գումարը:

Նշանաւոր ռուս բանաստեղծ Լերմոնտովի մահին քառատուն տարւոյ տարեգրութիւն տեսնելու ժամանակ Պիատիգորսկի ռուս հոգեւորականութիւնը նախ հրաժարեցաւ օրհնել բանաստեղծի կիսարձանը և եկեղեցում հոգեհանգիստ կատարել նրա յիշատակին, բայց ռուս եպիսկոպոսը հրամայեց քահանաներին թէ հոգեհանգիստ կատարել և թէ օրհնել Լերմոնտովի կիսարձանը: Այժմ «Русский Курьер» հաղորդում է որ ռուսաց սրբազան Սինոդը այդ գործը քննելուց յետոյ արդարացրեց Պիատիգորսկի քահանաներին, որ նրանք հրաժարվում էին եկեղեցական արարողութիւն կատարել բանաստեղծի յիշատակին:

Լուծիւնների օգնութեամբ գտնի թէ ով է «Մըշակի» Նուխու թղթակիցը և գտնելուց յետոյ նրա բերանը կապէ:

«Русский Курьер» լրագրին Ս. Պետերբուրգից հեռագրում են որ դիտաւորութիւն կայ թոյլ տալ զինուորականներին ծառայութիւնից դուրս հազնել քաղաքական շորերը:

ԳԻԼԻՃԱՆԻՑ մեզ գրում են. «Մի հայ երիտասարդ քանի մի տարի է արդէն մօտակայ գիւղերից միմեմ պատկանում է մի մալական աղջկայ հետ: Այժմ կնոջից մի երեխայ է ծնվել: Երիտասարդ հայը դիմելով իր ծանօթ ռուս աստիճանաւորներին հարցրեց արդեօք պարտաւոր է երեխային մկրտել ռուս կրօնով: Ռուս ծանօթները նրան բացատրեցին որ այդ նրա կամքից է կախված, քանի որ մալականները աղանդաւոր են և չեն պատկանում տիրապետող ուղղափառ եկեղեցուն, ուրեմն երբեք չեն ծնված է մալականուհուց կարելի է մկրտել և հայ-լուսաւորչական: Որեքը ստիպում է ուղղափառ մկրտել միայն այն զուգայններին, որոնք ծնվում են ուղղափառ դաւանութեանը պատկանող հօրից կամ մորից, իսկ երբ օրինակ, հայրը հայ է, իսկ մայրը մալականուհի, կամ այլ աղանդաւոր, որ չէ պատկանում պետական եկեղեցուն, օրեքը չէ կարող ստիպել երեխային ուղղափառ մկրտել, այլ դա ծնողների կամքից է կախված, ինչպէս ընդհանրապէս, կաթոլիկների և այլ դաւանանութիւնների մէջ: Այսպիսով հայը նոր հակադաս իր իրաւունքը և մկրտեց իր երեխային լուսաւորչական կրօնով:»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԿ ԳԶԼԱՐԻՑ

Ի լրոյ տեղեկացայ, որ Աստուած ի թեմին մի քանի զպարտեանի վարչութիւնքը, տարակուսանաց մէջ են ի մասին այն փողերի որ ես ըստացել էի ճանապարհի ծախսերի համար թեմական տեսչի պաշտօնը վարելու ժամանակ: Ի ցրումն ամենայն տեսակ տարակուսանաց և ի միամտութիւն զպարտեան վարչութեանց յայտնում եմ, որ ես ճանապարհահամարսի ամբողջ գումարը 250 ռուբլ, որը ըստացել էի ոչ թէ զպարտեան վարչութիւններից անմիջապէս, այլ Ղալարի հոգեւոր կառավարութիւնից, ուր ուղարկված էին այդ գումարները իւրաքանչիւր զպարտեանից առանձնապէս, վերադարձուցի նոյն հոգեւոր կառավարութեանը լրիւ, ի ստուգութիւն որպէս ունեւոր և հետեւեալ ապահովագրի կառավարութեան նախանշանից ստացած: «Ապահովագիր. 1881 ամի, ի 24-ն մարտի տուաւ այս ապահովագիր ի փոխանորդէ անդուստ և նախանշանից Ղալարայ հայոց հոգեւոր կառավարութեան Աղամ վարդապետէ Տէր Նիկողայոսեանց, նախկին վերապետի ռուսմասրանաց (Աստուած ի թեմին Աստուածատրոյ կաճկանեանց առ այն. զի ընկալաւ ի նմանէ զերկուսարիւր յիսուն ռուբլի, որ տուեալ էր նմա վասն ճանապարհածախուց ի դէ-

Մեզ գրում են ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ, «Հոգեւոր զպարտեան տեսուչը հրաժարվում է իր պաշտօնից: Ալեքսանդրապոլիք խնդրում են նրան միջնալ, բայց նա չէ համաձայնվում: Այժմ նա թիֆլիս է, այնտեղ էլ հեռագրի ուղարկեցին, խնդրելով որ դարձեալ ընդունի պաշտօնը:»

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են. «Այստեղ խոստում են ամենախոնարհ խնդրել ուղարկելու թագաւոր կայսրին Նրա ողորմածութեան ուշքը Ալեքսանդրապոլի գաւառի գիւղացիների այժմեան անհող զրոյթեան վրա դարձնելու և չնորս խնդրելու Նորին Մեծութեանց գաղթելու նոր նուաճած երկրները:»

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ հայերէն գրքերի հրատարակութեան խնդրում է մեզ յայտնել որ դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է թիֆլիսի բոլոր գրաւաճառների մօտ «Քօրինգ»-ի պատմութիւնը: Թարգմանութիւն քահանայ Աղանեանցի: Գինը 60 կօպէկ է: Նոյնպէս դուրս եկաւ մամուլի տակից նոյն ընկերութեան հրատարակութեամբ Մօսկվայում տպված «Կամաու-Քաթիլայի բանաստեղծութեանց ժողովածուն» հեղինակի պատկերով: Հետոյ այդ գիրքը կը ստացվի թիֆլիսում: Գինը լինելու է 50 կօպէկ, իսկ փառակազմ 1 ր. 20 կօպէկ:

Պ. Ա. Թոմաթեանի զատախտութիւնը «Թիբր»-ից Հայաստանի մասին» որ տպվեցաւ «Մշակ»-ի մէջ, այժմ հրատարակվեցաւ առանձին գրքով: Գրքի գինը 30 կօպէկ է և ծախվում է պ. Զաքարիա Գրիգորեանի «Կովկասեան» գրաւաճառանոցի մէջ և նոյնպէս «Մշակ»-ի խմբագրութեան մէջ: Բրօշուրը բաղկացած է երկու մասից, որոնցից առաջինը կրում է «Հայրենիքի պահանջներ», իսկ երկրորդը «Հայ գիւղացի» վերնագրերը:

Թիֆլիսում, յուլիսի 15—16-ին պատահած մեծ անձրեւի և հեղեղի ժամանակ քանդվել են մի քանի հին տներ և նոյն հեղեղից խեղդվել են մի քանի մարդիկ: Այսպիսի դէպքեր լսվում են և Անդրկովկասի ուրիշ տեղերից:

Էջմիածնի կանցլէր եպիսկոպոս Մանկունու լիագոր զեպան Թիֆլիսում, վարդապետ Մամբրէն, որ առաջ բնակվում էր Սուրբ-Սարգիս եկեղեցուն կից անշուք սենյակների մէջ, նորերում, Աղափրեանց Գրիգոր եպիսկոպոսի գնալուց յետոյ, տեղափոխվեցաւ առաջնորդարանի շէնք սենյակները: Ուրեմն պարոն Մամբրէն այսուհետեւ աւելի ևս հաստատվեցաւ Թիֆլիսի լիագոր առաջնորդ:

ՆՈՒԹԻՑ մեզ գրում են. «Քիչիչայ լեռնային գետակը իր ուղղութիւնը փոխել է դէպի քաղաքի կենտրոնը: Հաճաղում են սարսափելի մեծ ջրեր են զոյացել: Բաւական է մէկ անձրեւային հեղեղ և Քիչիչայ, Ղուրուշայ և Կոճան գետակները յորդանալով և քաղաքի մօտ միանալով, կարող են միանգամայն Նուխիս սրբել: Երբեք են միանգամայն Նուխիս գետակը զարձնում ենք այս վտանգի վրա: Կարող է յետոյ ուշ լինել:»

ՆՈՒԹԻՑ մեզ գրում են որ տէր Սիմեոն Տէր-Պողոսեանը, բարկացած «Մշակ» թղթակցի վրա գիշեր ցերեկ Սողոմոնի գրքեր և Էֆիմէր-գին է կարդում, որպէս զի այդ գրքերի գուշա-

«Вестникъ Европы» ամսագրի յուլիսի տետրակը ամբողջութեամբ ուղարկութեան արժանի է: Մանաւանդ նշանաւոր են այդ տետրակի մէջ երկու յօդուածներ. Русские рационалисты (Ռուս րացիօնալիստներ) և Ретноградная печать (Ռետոգրադային տպարան): Առաջինը խօսում է ռուս աղանդների, մանաւանդ շտուկիստների մասին, երկրորդը՝ ռուս յետադէմ մամուլի մասին, մանաւանդ Կատովի և Ակսակովի փնտաւար գործունէութեան մասին:

ԳԶԼԱՐԻՑ մեզ գրում են հետեւեալը: «Վիճակի առաջնորդ Գեորգ եպիսկոպոս վեհապետեան և կնէ էր Ղալար, իբր թէ բէ վիզիտ անելու այդ քաղաքի եկեղեցիների և զպարտեանի մէջ, բայց իրօք, ապրելով մի ամսից աւելի այստեղ, նրա արած գործը եղաւ այն, որ հրաւերներ վայելեց մի քանի աղանդների մօտ, ճաշեց նրանց այգիներում իր տիրացուների հետ, ուրիշ ոչինչ: Ի պարտեան վարչութիւնը իր Կօչիկները մայից սրբազանի

զի կրնայ գտնուել Արդանուէցի մը—հաց չունեցող.— բայց չը կայ այնպիսին իրենց մէջ որ գինի և մանաւանդ օղի չունենայ իր տունը:

Արդանուէի գլխաւոր արտահանութիւնքն են ուրեմն ամեն կերպ հացաբոյս և անոնց ալիւրը, բանջարանոցի բոյս, ծխախոտ, բուրդ, գինի, և օղի, և այլն: Այս բերքերը կը խրկուին Արթւին, Բաթում, Թրապիզոն, Կ. Պոլիս, Կարս, Կեօլա և փէնէք քաղաքներն: Բայց ամենէն հարուստ և կարեւոր արտահանութիւնն է ընտիր ընկուղի կոճղ, կտաւատ և եղի, կովի, այծի, ուլի, գայլի, աղուէսի, խոզի և գոմէշի մորթ, որոնք Թրապիզոնի միջոցաւ մինչև Կ. Պոլիս, Մարսեւա, Փարիզ կուղարկվին: Արդանուէն կեղծ նաև ջրողացի երկանաքար և կը խրկուի Արդահան, Փենէք, Կեօլա, Կարս և այլն: Իսկ վաճառաբերութիւնքն են՝ կտաւեղէն, մետաքսեղէն, չուլա, ապակեղէն, չիթ, գործիներ, խահլէ, չաքար, օգեւոր ըմպելիք, բրինձ, բամբակ և այլն:

Արդանուէ՝ տեղական ձեռագործներու մասին ալ բոլորովին տգէտ չէ: Հոս կը գործեն աղիւ, փափուկ զենքիներ, մետաքս և բամբակէ, գործը, ըստ արեւելեան սովորութեան՝ կանայք կը կապուին: Այս զենքիներէն առատապէս կը տարուին Շապուշի, Կեօլայի և փէնէքի աւանաց կողմերը: Կը գործեն նաև ընտիր բամբակեղէն կերպաս մը, տեղացեղմէ մանուսա կոչուած, որ երեկ է իր գիմացկունութեամբ, և մեծ քանակութեամբ կը սպառուի այս կողմերը, նուրբ անձեռոցներ, մետաքսեղէն այլ և այլ գործածանքներ, ամուր, սպիտակ, կապոյտ, կարմիր կտաններ, մաղեղէն կապերանք, և տե-

սակ մը մաղեղէն կերպաս—որ բոլոր Արդանուէի և չրճակայից արանց զգեստի տեղ կը ծառայէ,—կանացի լաչակ ու փափուկ՝ բրդեայ կամ եւրօպական մանածէ զիպակ մը, զոր է հրամ կանուանին, և կանայք անով զլինէ մինչև ոտք կը ծածկուին: Այս յիշածներս բոլորն ալ հայկական լիցակաւ սեռի ձեռագործներ են, որոնք վրայ կը նշմարի միշտ, աւելի քան զարս, ձեղտում մը զէպի նորն և լաւն: Բայց ափսոս որ այս ձեռագործք այնչափ չեն փնտաւոր, որ տեղացիք եւ ամենայն հոգով անոր վրայ աշխատին և դայն կատարեալգործելու ջանան:

Ինչպէս վերն յիշեցի, Արդանուէ՝ 900-ի մօտ հայ բնակիչ կայ, որոնց մեծ մասը վաճառակաւնութեամբ կապուին: Ունեւորներն բուն քաղաքին մէջ ունին իրենց յատուկ խանութներն, իսկ տկարներն՝ նոյն հարուստներէն ապրանք գնելով, կանոնն կը տանեն մօտակայ գիւղերն, ուր փողով, ուսեստով, կամ կենդանեօք ծախելով զայն, իրենց ապրուստը կը հոգան: Թիբր-բիւր իշխանութեան ժամանակ, վաճառականք Կ. Պոլիս կերթային վաճառք բերելու, բայց հիմայ Թիֆլիս կերթան: Այնպէս որ Թիֆլիսի մէջ արդանուէցի կամ արթւինցի վաճառական երբեք պակաս չեն: Դոյողիղեան միւս մասն կը պարագի արուեստներով, դերձակութեամբ, կօշկակարութեամբ, նպարավաճառութեամբ, ներկարարութեամբ, երկաթագործութեամբ: Այս վերջինս մեծապէս յառաջացուած է Արդանուէի մէջ պ. Արահան Արահամեան, որուն վրայ ուրիշ անգամ առիթ կունենամ խօսելու, այժմն այնչափ միայն ըսելով որ դա՝ թէ անուս՝ այսուամենայնիւ որչափ որ ընտիր դարբին ու երկաթա-

գործ է, նոյնչափ ալ հանճարեղ միտք և միակ ազգասիրութեան ոգի ունի այն ամբողջ հասարակութեան մէջ, որոյ առաջնորդք են արթւինցի տէր Յովն. Ալիքեանի պէս 5—6 տարի փաթիլի ուսումնարանը կեցող և ուսման ու ազգի վրայ դադափար չունեցող և հայերէն նոյն իսկ պարզ կարգալ մը չը գիտող վարդապետք:

Թիբր-բիւր իշխանութեան ժամանակ երբ բոլոր փոքր-Ասիա թիբրեաց հարստահարութեանց տակ կընկնէր, կրնամ ըսել, որ Արդանուէի հայք ամենէն քիչ բռնութեան ենթակայ են եղած: Եւ ասոր պատճառն է հայոց և թրքաց մէջի անձուկ, անբարեկամ յարաբերութիւններն, որոնք այս երկու աշխարհ, այլացեղ ազգերը կարծես ի մի ձուլած էին: Այն միւսին անհրաժեշտ հարկաւորութիւն ունէր. վասն զի ինչ որ մէկն ունէր, մէկային քով այն կը պակսէր և ընդհակառակաբար: Որինակ բոլոր նահանգի մէջ վաճառականք, դերձակք, կօշկակարք, դարբինք, ներկարարք, նպարավաճառք՝ միայն հայերն էին: Իսկ երկրագործք, պարտիպանք, անասնաբուծք, այսինքն հացաբոյս, բանջարանոցի բոյս, ընտանի կենդանիք, եղ, թան, պանիր, պտուղ և այլն այսպիսի կարեւոր պիտոյք ունեցող (թէ և հայոցմէ ալ կան, բայց) մեծագոյն մասամբ թրքերն էին: Աստի հայն որ ուզէր իր կալուածներն հոգալ, հացաբոյս, բանջարեղէն, կաթնեղէն և այլն ունենալ, անպատճառ թրք-բիւր պիտոր զիմէր: Իսկ թիբրեաց ալ փոխադարձաբար թէ որ ուզէր զգեստեղէն աւանուկ, կարել տալ, ուսումնալ գնել, երկրի գանազան՝ իրեն աւելորդ բերքերն ծախել, լաթ ներկել տալ, և ամենակարեւոր աշխատութեան գործիներն ունե-

նալ, կամ զանոնք նորոգել տալ, նաև փողի հարկաւորութեան միջոցին՝ անհրաժեշտ հային պէտք է զիմէր: Այն առանց միւսին չէր և չէր կրնար ըլլալ: Այս պատճառաւ երկու կողմն ալ նաև շահախնդրութեան շարժեալ, իրար վրայ մեծ յարգանք, համակրութիւն և բարեկամակցութիւն ունէին: Աստի թէ որ հայերն թրքաց ժամանակ հարստահարութեան կը կրէին, այդ աւելի օտարաքաղաքացի ծառայողներն էր, քան թէ բուն իսկ տեղացիներն, որոնց մէջ շատ թէ բուն իսկ տեղացիներն, որոնք մէջ շատ քիչ կար այնպիսի թիբրե մը, որ հային կարօտութիւն և տալիք չունենար: Թրքական ժամանակի այդ նկարագրեալ վիճակը կը շարունակէ հիմայ ևս: Սակայն այս վերջի պատերազմէ յետոյ մի քանի կրօնամալ թրքաց գրգռելով զիւր զայնց մէջ գաղթականութեան խորհուրդն էր մտած: Բայց իրենց այդ ընկերակից բարեկամ զրոյթները մտածելով, և չնորսու աշխարհ կառավարութեան Արդանուէի այժմեան քաղաքական պ. Զարուկեանցի, որ աղիւ, անպատկառութիւն կառավարիչ մըն է, հիմայ այդ խորհուրդներն եթէ բոլորովին չէ, գոնէ ամենամեծ մասամբ անհետացած են, մանաւանդ թէ ցիր-ցան գաղթողներն ևս ետ դարձան և հեռացան զաւանալու վրայ են:

Այս առ քիչ մը Արդանուէի հայազգեաց տեղեւտական գրութեան վրայն այս հակիրճ տեղեկութեանց, ձեր պատուական լրագրոյն մօտակայ թիբրեցի էջերէն մէկու մէջ զետեղուիլ խնդրելով, կը խօստանամ միւս նամակումս որիչ ոչ նուազ կարեւոր ծանօթութիւնք հաղորդել: